

237

4(07)
5-98

25 JUN 2013

2304-10

ՀԻՍՏ ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ծ Ր Ը Գ Ի Ր

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ

ՅԵՐ  
Ը

4(07)  
Ծ-98

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1988

4(07)  
5-98  
ԱԱ

# ԾՐԱԳԻՐ

## ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. «Լեզվաբանության ներածությունն» ավանդվում է առաջին կուրսում (I կիսամյակում) և կազմում է բարձր կուրսերում կարգապետ լեզվաբանական դիսցիպլինաների՝ առանձին կոնկրետ լեզուների պատմության և քերականության ներածությունը:

Դրա համար ել այս առարկան պետք է ապահովի ուսանողին մի շարք կոնկրետ իրողությունների իմացությամբ, վորոնք անհրաժեշտ են նրա կողմից հետազայում ուսումնասիրվելիք լեզվաբանական առարկաների ավելի խորը մշակման համար, և տա՝ ընդհանուր մեթոդաբանական սահմանումներ նրա հետագա աշխատանքների նպատակների համար:

2. Ծրագիրը հանդիսանում է ընդհանուր լեզվագիտության կուրսի կառուցման մի փորձ հիմնված մարքսիզմ-լենինիզմի կրթիչների աշխատություններում լեզուների մասին արված դրույթների և խորհրդային լեզվաբանության — և առաջին հերթին ակադեմիկոս Ն. Յա. Մառի լեզվի նոր ուսմունքի — կոնկրետ նվաճումների վրա:

Ծրագիրն ունի հետևյալ բաժինները՝

I. Ներածություն, II. լեզվի կառուցվածքը, III. լեզվաստեղծական պրոցեսի միասնության ուսմունքը, IV. գրի պատմությունը, V. լեզվաբանության պատմության համառոտ ուրվագիծը:

I. «Ներածությունն» Ուսանողին պետք է առ ընդհանուր պատկերացում կուրսի անելիքների մասին, լեզվաբանության մյուս դիսցիպլինաների միջև ունեցած տեղի մասին, նրա հիմնական բաժինների, նրա վոչ միայն գործնական, վորպես լեզվի պնդվ կատարվելիք ամեն տեսակ աշխատանքի բազայի համար անհրաժեշտ նշանակության, այլև մարդկային հասարակ



6368  
38

Թարգ. խմբ. Ս. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ  
Տեխ. խմբագիր՝ Խ. ԽԱՉԱՏՐՅԱՆ  
Սրբագրիչ՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ  
Գլավիտի լրագոր՝ Ց—2711 պատվեր № 311, տիրած 2100  
Հանձնված է արտագրության 3 նոյեմբերի 1938 թ.  
Մտորագրված է ապագրելու 23 նոյեմբերի 1938 թ.  
Մանկագրական Ինստիտուտի տպարան, Մաքրի փ. № 17 Շերիվան.

կուլթյան պատմութեան կարեւորագուցն աղբյուրներէց մեկի, նշանակութեան մասին: Ճիշտ նույնպէս նա պետք է տա ուսանողին վերջինիս համար նոր դիպքիպիւնի առարկայի վորոշումը, լեզվի գիտական վորոշումը: Այսպիսով «Ներածութեանը» սեղմ ձևով տալիս է ուսանողին այն սահմանումները, վորոնք հետագայում պետք է ծավալվին նրանց առաջ կոնկրետ մատերիալի ամբողջ բազմազանութեամբ:

II. Յերկրորդ բաժինը՝ «Լեզվի կառուցվածքը» կազմում է վոչ միայն ծրագրի մեթոդաբանորեն կարեւորագուցն բաժին, այլև լեզվի կապակցութեամբ ունկնդրների հետագայում ունենալիք բոլոր աշխատանքների յուրատեսակ ներածութեան: Այս բաժնի հիմնական խնդիրն է՝ ունկնդրի առաջ յերևան հանել լեզվական յերևույթներն իրենց բովանդակ բարդութեամբ, ստույղ նրանց ծագմաբանական բացատրութեանը, կենտրոնացնել նրա ուշադրութեանը իմաստաբանական, հնչյունաբանական և քերականական կողմի վրա և միաժամանակ նրանց տալ լեզվաբանական աշխատանքի տարրերի հաստատուն գիտելիքներ, նրա հիշողութեան մեջ ամրապնդել լեզվաբանական տերմինաբանութեանը, առանց վորի միտք չունի վոչ մի հետագա աշխատանք լեզվի գծով: Լեզվի կառուցվածքի ուսումնասիրութեանն ուսանողին հանգեցնում է լեզվի ու մտածողութեան պատմութեան դիալեկտիկական-մատերիալիստական կոնցեպցիային, այդ ուսումնասիրութեանը նախապատրաստում է նրան գիտակցորեն յուրացնելու ծրագրի III բաժնում շարադրված լեզվաբանութեան փիլիսոփայութեան հիմնական դրույթները:

III. Յերկրորդ բաժինը՝ «Լեզվապատկերման պրոցեսի միասնութեան ուսումնառը» ունկնդրին առաջնորդում է դեպի լեզվի գիտութեան հիմնական պրոբլեմների, լեզվի ծագման ու զարգացման պրոբլեմների շրջանը: Լեզվի, մտածողութեան ու հասարակութեան մարքս-լենինյան կոնցեպցիայից բխող վորոշումների յուրացումը հնարավոր է լեզվաբանական կոնկրետ մատերիալներին ունկնդրի կողմից միայն բավականաչափ տիրապետելու դեպքում, դրա համար ծրագրերը հատուկ ուշադրութեան է դարձնում այն բանի վրա, վոր ունկնդրները յուրացնեն փաստական տեղեկութեանները լեզուների մասին՝

նրանց անցյալում և ներկայում: Վոր քննադատորեն ծանոթանան լեզուների գոյութեան ունկնդր դասակարգութեաններին, բարբառագիտութեանը և բարբառագրութեանը, ոգտակար է նույնպէս ծանոթացնել ունկնդրին աշխարհի, ՍՍՀՄ-ի լեզվաբանական քարտեզներին, ինչպէս և բարբառագրական քարտեզներին ունկնդրին:

Ունկնդրը վոչ թե վերացականորեն, մեթոդաբանական ընդհանուր ձևավորումներից կտրված, այլ կոնկրետ կերպով, բազմաթիվ փաստերի վրա պետք է յուրացնի միասնական լեզվաստեղծական պրոցեսի ուսումնառը, լեզվի ու մտածողութեան ծագման ուսումնառը մարդկային հասարակութեան ծագման պրոցեսի ու աշխատանքի պրոցեսի բարդացման մեջ, լեզվի փոփոխութեաններին սոցիալ-տնտեսական պայմանավորվածութեան (վեջին հաշիվ) ուսումնառը, այնպիսի հիմնական հասկացողութեանների բովանդակութեան փոփոխութեան ուսումնառը, ինչպիսին և «Լեզու» և «Բարբառ» հասարակութեան զարգացման տարբեր ետապներում: Լեզվին, վորպէս վերնաշինքի, հատուկ հետ մնալը բազայի զարգացումից, լեզվի մեջ վորոշ ստադիայի (հասարակական պատմական ֆորմացիայի), ավելի վաղ շրջանի ստադիաների վերապրումների սովորութեանը ունկնդրին հանգեցնում է հասկանալու պատմականութեան պարտադրականութեանը՝ լեզվի ուսումնասիրութեան մեջ:

Դասախոսը լեզվաբանութեան հիմքը կազմող հասկացողութեանների բացատրութեան կապակցութեամբ պետք է մերկացնի այն լեզվաբանական թեորիաները, վորոնք տալիս են լեզվի մեջ գոյութեան ունկնդր պատմական պրոցեսի ազգավաղված նկարագրերը և վորոնք կեղծում են լեզվաբանական հիմնական հասկացողութեանները բուրժուադիալի ոգտին (ինչպէս որինակ լեզվի և ռասայի նույնացումը, մի քանի լեզուների, վորպէս «ռասայորեն մաքուր», «ընտրյալ» լեզուների տանձնացումը, լեզվի պատմութեան մեկնաբանումը «ժողովրդական վողու զարգացմամբ» և այլն): Խորհրդային Միութեան մեջ լեզուների բնագավառում կատարված կուլտուրական ու ազգային շինարարութեան ուսումնասիրութեանը հնարավորութեան է ընծեռում նշելու լեզուների մերձեցման ուղիները՝ ձևով ազգային

և բովանդակութեամբ սոցիալիստական կուլտուրաների ծաղկման միջոցով՝ մի միասնական համաշխարհային լեզու ապագա հասարակութեան մեջ (ընկ. Ստալինի ճառը կուսակցութեան XVI համագումարում):

IV. «Գրի պատմութիւնը» առանձին բաժին դարձնելու դրդապատճառն այն է, վոր գիրն իր պատմութեան մեջ կրկնում է լեզվի հետ ունեցած ընդհանուր ստադիաները. այդ պատճառով «Գրի պատմութիւնը»-ը նպատակահարմար է ուսումնասիրել միայն այն բանից հետո, յերբ ուսանողը կյուրացնի պատմական պրոցեսի հիմնական որինաչափութիւնները լեզվի մեջ:

Անհրաժեշտ է, վոր դասախոսը հնարավորութեան չափ կոնկրետացնի այս բաժնում հաղորդած տեղեկութիւնները ունկընդորին մատչելի նյութի վրա: Շատ շահավոր եղալից գրի պատմութեանը վերաբերող գիտողական պիտույքներից, աղյուսակներից և նկարներից:

V. Լեզվագիտութեան պատմութեան համառոտ ու ըզվագիծը դրված է կուրսի վերջում. լեզվաբանութեան հիմնական պրոբլեմների գիտական լուծումների յուրացումով միայն ունկնդիրը կկարողանա քննադատորեն ըմբռնել լեզվի գիտութեան զարգացումը: «Լեզվաբանութեան ներածութեան» այս բաժինը կարելի չէ բաց թողնել ֆիլոլոգիական ֆակուլտետների այն բաժիններում, վորտեղ կարդացվում է «Լեզվագիտութեան պատմութեան առանձին դասընթացը:

**Բ) ԺՐԱԳԻՐ**

(60 ժամ 1-ին կիսամյակում)

**I. ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ**

1. Լեզվի գիտութիւնը և նրա խնդիրները: Լեզվաբանութեան առարկան: Լեզվի, իբրև լեզվական գործնական գիտութեան» (Մարքս) և իբրև «հաղորդակցման կարևորագույն միջոցի» (Լենին) Մարքս-Լենինյան հասկացողութիւնը: Լեզվի գիտութեան բաժինները: Լեզվաբանութեան տեղը մյուս գիտութիւնների մեջ:

**II. ԼԵԶՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

2. Բառագիտութիւնը և իմաստաբանութիւնը. Բառը և նրա իմաստը: Բառի կոնկրետ և վերացական իմաստը: Վերացական իմաստների ծագումը: Մենիմաստ (МОНОСЕМІЯ) և բազմիմաստ (ПОЛИСЕМІЯ) բառեր: Կոնտեքստի նշանակութիւնը: Հասկացողութիւն տերմինի մասին: Բառի ուղղակի և փոխաբերական նշանակութիւնը: Հոմանիշներ (СІНОНИМЫ) և հականիշներ (АНОНИМЫ): Հասկացողութիւն իդիոմների մասին: Բառի սոցիալական գունավորումը: Բառի ստուգաբանական նշանակութիւնը և նրա տարբեր բացատրութիւնները: Այսպես կոչված «ժողովրդական ստուգաբանութեան» յերևոյթիւնը:

Բառի իմաստի փոփոխութիւնները: Փունկցիոնալ (գործառնական) իմաստաբանութիւնը:

Բառերի պատմական զարգացումը և բառապաշարի զարգացումը. հասկացութիւն նորարանութեան (նեոլոգիզմ) և հնաբանութեան (արխաիզմ) մասին: Բառերի տարբերակումը և նրա պատճառները: Բառային փոխառութիւնների և բառապատճենումների (կալկերի) հարցը:

3. Հնչյունաբանութիւնը: Լեզվի հնչյունները: Լեզվի գործարանները (որգանները): Հնչաբառաբերումը և լսողական ընկալումը: Հնչյունների վորակական տարբերութիւնները. ձայնավորներ և բաղաձայններ: Զայնավորների և բաղաձայնների դասակարգութեան կարևորագույն սիստեմները: Հնչյունների տարբերութիւնը ըստ ամանակի, բարձրութեան և ուժի: Հնչյունները կապակցված խոսքի մեջ: Վանկ: Շեշտ: Առոգանում: Առնմանումը, տարնմանումը և այլ յերևոյթիւնները: Հնչյուն և հնչույթ (ֆոնեմա): Հնչույթների և զիֆուզ հնչյունների առաջացումը մարդկային լեզվի զարգացման պրոցեսում: Հասկացութիւն հնչույթների սիստեմի մասին: Տարբեր լեզուների հնչույթների սիստեմները:

Լեզուների հնչյունական սիստեմի պատմական փոփոխութիւնները: Հնչյունական փոփոխութիւնների հիմնական տիպերը:

Տառի և հնչյունի հարաբերակցութիւնը: Հասկացութիւն ուղղագրութեան և նրա տարբեր սկզբունքների մասին: Հասկացութիւն ուղղախոսութեան (орфоэпия) մասին: Հնչյունաբա-

նական տառադարձութիւնը և նրա ամենատարածված սխտեմները: Հարեթարանության մեջ կիրառվող վերլուծական այբուբենը և տառադարձութիւնն նշանները:

Ձե վ ա բ ա ն ու թ յ ու լ և շ ա բ ա հ յ ու լ ս ու թ յ ու լ և: Հնչյունաբանութիւնը, ձևաբանութիւնը և շարահյուսութիւնը և նրանց հարաբերակցութիւնները: Քերականութիւն և բառագիտութիւն հարաբերակցութիւն հարցը:

Քերականական և քերականական իմաստ: Հասկացութիւն արմատի, հիմքի, ամանցների մասին: Լեզվի քերականական միջոցները (ածանցում, հիմքերի թեքում, բարդացում, բառաշարք, շեշտ և առուգանութիւն), այսպես կոչված «սպասարկում» բառեր հասկացութիւն քերականական կատեգորիայի մասին: Քերականական կատեգորիաների պատմական փոփոխելիութիւնը:

Հասկացութիւն առանձին բառի, վորպես ձևաբանական միավորի մասին: Բառակազմութիւն սկզբունքները տարբեր սխտեմների լեզուների մեջ: Ձևաբանական պրոցեսներ առանձին լեզվի մեջ (վերատարբարում—переразложение), պարզացում, կցում (արտաքուստ միացում) և այլն:

Խոսքի մասերը և նրանց դասակարգումը: Ակադեմիկոս Մառի ուսմունքը խոսքի մասերի և քերականական կատեգորիաների առաջացման մասին:

Հասկացութիւն նախադասութիւն մասին, նախադասութիւն վորոշումները տրամաբանական, հոգեբանական և ձևական քերականութիւն մեջ և նրանց քննադատութիւնը: Նախադասութիւն անդամներ և խոսքի մասեր: Նախադասութիւն անդամների բաժանումը սկզբնական անանջատ «բառ-նախադասութիւնից»:

Շարահյուսական կառուցվածքի հասկացութիւնը: Շարահյուսական կառուցվածքներ տարբեր սխտեմների լեզուների մեջ: Նախադասութիւն ակտիվ և պասիվ կառուցվածքը: Անդեմ նախադասութիւններ: Պարզ և բարդ նախադասութիւն: Նախադասութիւն տարբեր տեսակների պատմական հաջորդականութիւնը:

Հասկացութիւն լեզվի համադրական (սինթետիկ) և վերլուծական կառուցվածքի մասին:

### III. ԼԵԶՎԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՊՐՈՑԵՍԻ ՄԻԱՍՆՈՒՅՅԱՆ ՈՒՍՈՒՆՔԸ

5. Աշխարհի լեզուները, նրանց հիմնական սխտեմները և ափսքերը, տեղեկութիւններ նրանց աշխարհագրական տարածման մասին:

Աշխարհի լեզվաբանական քարտեզի փոփոխութիւնները և նրանց պատմական պատճառները: Հասկացութիւն «կենդանի» և «մեռած» լեզուների մասին: «Մեռած» լեզուներից ամենահարեթները և նրանց հարաբերութիւնները «կենդանի» լեզուների հետ (նրանց կառուցվածքի նմանութիւնը և տարբերութիւնները, նրանց աշխարհագրական տարածումը):

Համեմատական-պատմական մեթոդը լեզվաբանութիւն մեջ և լեզուների դասակարգումը: Ծննդաբանական դասակարգում: Տիպաբանական դասակարգութիւններ, այսպես կոչված ձևաբանական դասակարգում (անջատական, կցական (агглютинативные), բազմահամադրական և թեքական լեզուներ), նրա անբավարարութիւնը, տիպաբանական դասակարգումների նորագոյն փորձերը: Լեզուների ավանդական դասակարգութիւնների քննադատութիւնը լեզվաստեղծման պրոցեսի միասնութիւն ուսմունքի լույսի տակ: Լեզվագիտութիւնն ռասսայական թեքիան և նրա մերկացումը: Հասկացութիւն ստադիաների ու սխտեմների մասին:

6. Լեզվի ծագման պրոբլեմը և նրա նշանակութիւնը (հարցի պատմութիւն համառոտ ուղղագիծը): Լեզուն և մտածողութիւնը, նրանց փոխադարձ հարաբերութիւնը և նրանց կապը հասարակական բազիսի հետ: Լեզվի զարգացման հնագոյն ստադիաները: Կինեթիկ և հնչական լեզու:

7. Լեզուն վորպես պատմականորեն—զարգացող յերևույթ: Լեզվի առանձին կողմերի փոփոխութիւնների փոխադարձ կապի հարցը և այս հարցի լուծումը տարբեր լեզվաբանական ուղղութիւններում: Լեզվի պատմութիւն իզեռախոսական և գոհիկ-մատերիալիստական մեկնաբանութիւնների քննադատութիւնը: Լեզվի փոփոխութիւնների կապակցութիւնը հասարակական ձևերի բնագավառում կատարվող փոփոխութիւնների, նյութական կուլտուրայի և գաղափարախոսու-

թյան հետ: Լեզվի՝ վորպես պատմական աղբյուրներից մեկի՝ նշանակությունը: Լեզվաբանական հետաքննությունը կառուցման փորձեր:

8. Լեզվի զարգացման հիմնական որինաչափությունները: Լեզու և աղբյուրները: Լեզու և դասակարգ: Գրական լեզուներ: Լեզուների փոխազդեցությունը պատմական զարաշրջաններում: Լեզուների հերթափոխությունը, նրա պատճառները և ձևերը: Ազգային փոքրամասնությունների, զաղութային և կիսազաղութային ժողովուրդների լեզուները կապիտալիստական հասարակության մեջ: Յերկիրվություն: Լեզուների խառնվելը և դրա պատմական հիմունքները: Այսպես կոչված «միջազգային լեզուներ» (բնական և արհեստական): Մտալինը ապագա կոմունիստական հասարակության միասնական լեզվի մասին:

9. Լեզու և բարբառ: «Բարբառ» հասկացությունը սոցիալ-պատմական բովանդակությունը տարբեր հասարակական ֆոլկ-մացիաներում: Հասկացություն բարբառագիտության մեթոդները և բարբառագրության մեթոդիկայի մասին (համեմատական-պատմական բարբառագիտություն՝ լեզվաբանական աշխարհագրություն, սոցիալական բարբառագրություն փորձեր):

10. Ազգային լեզուների ծաղկումը Խորհրդային Միության մեջ հետհոկաեմբերյան ժամանակաշրջանում վորպես լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության իրականացման արդյունք:

Ազգային շինարարության հիմնական խնդիրները լեզուների բնագավառում Խորհրդային Միության մեջ (զբաղված լեզուների զարգացումը, տերմինաբանությունը ստեղծում, միջոցառումներ գրագիտության բնագավառում): Պայքար մեծապեսական շովինիզմի և աեղային նացիոնալիզմի դեմ լեզվի հարցերում:

## VI. ԳՐԻ ՊՍՏՈՒԹՅՈՒՆԸ

11. Գրի ծագումը և նրա հարաբերությունը լեզվի նկատմամբ: Հիմնական ետապները գրի զարգացման մեջ (նախազրային նշաններ և պատկերագրություն, գաղափարագրություն (իդեոգրաֆիա) հնչական գիր): Հնչական գրի զարգացման կարևորագույն ետապները: Այբուբենի ծագումը:

Այբուբենի հաղորդման ուղիները և այդ հաղորդման սոցիալ-տնտեսական պատճառները: Գրի ձևերի փոփոխումը: Հասկացություն հնեագրության (բոլեոգրաֆիա) մասին:

Գրի և հնչյան տարբերության պատճառները: Ուղղագրական նորմի ստեղծումը և նրա նշանակությունը:

## V. ԼԵԶՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՑ ՈՒՐՎԱԳԻԾԸ

12. Լեզվի գիտության պատմությունը: Լեզվաբանության ինքնուրույն գիտություն դառնալը: Հումբոլդտը և XIX դարի լեզվաբանության փրիլիսոփայությունը: Համեմատական-պատմական լեզվագիտության զարգացումը XIX դարում: Մարքսի և Ենգելսի կողմից համեմատական-պատմական լեզվագիտությանը աված դնանալու հարցը:

Թեորիական լեզվագիտությունը 20-րդ դարի սկզբում: Որթնոգրա կոմպարատիվիզմի գրությունների վերանայումը: Երազույն ուղղություններ արևմտ-յուլրոպական լեզվաբանության մեջ և նրանց քննադատությունը:

Թեորիական լեզվագիտությունը Խորհրդային Միության մեջ և նրա նվաճումները: Լեզվի նոր ուսմունքը (ակադեմ. Մառի հարթական թեորիան): Ազգային-կուլտուրական շինարարության նվաճումները և լեզվագիտական թեորիայի ու պրակտիկայի մտակա խնդիրները Խորհրդային Միության մեջ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր լեզվաբանության գասընթացն առ այժմ հունի միասնական ձևնարի: Դասախոսը պետք է ունենալին նշի մի քանի ձևնարիներ, զատելով զրանցից առանձին զրուխներ և զրանք լրացնելով իր դասախոսությունների գրանցումով:

1. ՄԱՐԿՍ, ԵՆԳԵԼՍ, ԼԵՆԻՆ, ՍՏԱԼԻՆ.—Լեզվի և մտածության պրոբլեմների մասին (Маркс, Энгельс, Ленин, Сталин—О проблемах языка и мышления, 1933 г. известия ГАИМК)

2. ԵՆԳԵԼՍ.—Ընտանիքի, պետության և մասնավոր սեփականության ծագումը:

3. ԵՆԳԵԼՍ.—Աշխատանքի մասնակցությունը կապի մարդացման մեջ, հայեր. հրատ. Կուսերատ, 1933 թ. Յերևան. կամ՝

«Բնության գիտելիտիկա», էջ 79—93, հայերեն հրատ. Կուսմբատ, 1936, Յերևան:

4. ՄՍԱԼԻՆ.—Մարքսիզմը և ազգային-դադութային հարցը, հայեր. հրատ. Կուսմբատ, 1935, Յերևան:

5. ԼՍՖԱՐԳ.—Լեզուն և հեղափոխութունը (Язык и Революция, 1930 г.)

6. ՄԱՌ, Ն. ՅԱ.—Ընտիր աշխատություններ, դասախոսի կողմից նշված հոդվածները (Март, Н. Я. Избранные работы—статьи по указанию преподавателя):

7. ՄԵՇՉՁԱՆԻՆՈՎ, Ի. Ի.—Լեզվի նոր ուսմունք (Мешанинов, И. И. —Новое учение о языке, 1936 г.)

8. ՈՒՇԱԿՈՎ, Դ. Ի.—Լեզվի գիտության համառոտ ներածություն, 1929 (գլխավորապես III, IV, V, VI, VII, գլուխները—ձրագրի 3-րդ, 4-րդ, 5-րդ բաժինների համար (Ушаков, Д. И.—Краткое введение в науку о языке, 1929 г.—Преимущественно главы III, IV, V, VI, VII, для раздела 3-го, 4-го, 5-го программы):

9. ԴԸ ՍՈՍՍՅՈՒՐ,—Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, 1933 թ.—գլխավորապես ներածության VI և VII գլուխները ձրագրի II բաժնի համար, չորրորդ մասը՝ ձրագրի 9-րդ բաժնի համար (Де-Соссюр—Курс общей лингвистики):

10. ՍԵՊԻՐ.—Լեզու, Մ. 1934 (գլխավորապես IV, V գլուխները ձրագրի 4-րդ բաժնի համար, IV և X գլուխները ձրագրի 5-րդ բաժնի համար (Сепир—Язык):

11. ՎԱՆԴՐԻԵՍ.—Լեզու, 1937, (առավելապես ձրագրի 2, 3, 4, և 5 բաժինների համար)—Вандриес —Язык.

12. Большая Советская энциклопедия (Лингвистические статьи по указанию преподавателя).



«Ազգային գրադարան»



NL0239541

